Յետ երկամսեայ հիւանդութեան Սեպտեմբերի 8ին վախճանեցաւ Արցախու (Շուշուայ) Վիճակի Հայոց Առաջնորդ

Տ. ԱՆԴՐԻԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ Տ. ԱՆԴՐԻԱՍԵԱՆ

Կ. Պոլսեցի 48 ամեայ հասակում։

Հանգուցեալ Եպիսկոպոսն իւր բարեբարոյ բնաւորութեամբ, Հայկ. Եկեղեցւոյ և Ազգի մատուցած անխոնջ բազմամեայ ծառայութեամբքը, ինչպէս նաև իւր զանազան պաշտօնավարութեանց ասպարիզում ցոյց տուած համեստ գործունէութեամբ արժանացած էր թէ Վեհափառ Հայրապետի առանձին սիրոյն և շնորհացը և թէ Ս. Էջմիածնի համայն Միաբանից և Ազգիս յարգանացն ու համակրութեանը։

Սա աշակերտեցաւ և պաշտօնեայ էր լուսահոգի Մատթէոս Կաթուղիկոսի դեռ նորա Կ. Պոլսում եղած օրերից մինչև վախճանը։

Հանգուցեալը ծնած էր Կ. Պոլսոյ Իւսկիւտար քաղաքամասում 1834ին և տեղական ազգային դպրոցում ուսումն ու կրթութիւն ստացած։

1845ի Սեպտեմբերի 30ին մտնելով եկեղեցական ծառայութեան մէջ՝ ստացաւ Կ. Պոլսոյ՝ երբեմն պատրիարգ բարեյիշատակ Կարապետ Արքեպիսկոպոսից Դէր աստիճան դպրութեան Իւսկիւտարու Ս. Խաչի Եկեղեցում. իսկ 1857ի Մարտի 15ին ստացաւ կիսասարկաւագութիւն և սարկաւագութիւն՝ և հետևեալ օրը կուսակրօն քահանայութիւն և արեղայութիւն Կ. Պոլսոյ երբեմն Պատրիարգ Մատթէոս Արքեպիսկոպոսի (ապա Կաթուղիկոս) ձեռնադրութեամբ՝ Կ. Պոլսոյ Միջգիւղի Ս. Աստուածածնի Եկեղեցում։ 1857ին պարգևատրեցաւ Օսմանեան Օգոստ. Սուլթանից Մէճիտիէի Դէր աստիճանի շքանշանով։ 1859ի Հոկտեմբերի 5ին ստացաւ վարդապետական Մ. իշխանութիւն Պօղոս Եպիսկոպոսի օրհնու-

թեամբ Ս. Գայիանէի վանքում 1859 ի Դեկտ. 13 ին Կ. Պոլսոյ Պատրիարք Գէորգ Արքեպիսկոպոսի (Ներկայ Վեհափառ Հայրապետի) յանձնարարական ծառայութեանց արժանապէս կատարման համար պարգևատրեցաւ ծաղկեայ փիլոնաւ։ 1860 ի Մարտ ամսին նոյն Պատրիարգի հրամանաւ կարգեցաւ քարոզիչ Միջագիւղի Ս. Աստուածածնի Եկեղեցւոյ, իսկ նոյն թուականի Մայիսի 15 ին Ագրիանուպոլսոյ (Էտիրնէ) վիճակին հովիւ և տեսուչ։ 1861 ի Մայիսի 15 ին Մատթէոս Կաթուղիկոսի ձեռնադրութեամբ ամբարձաւ ի բարձր աստիճան Եպիսկոպոսութեան Ս. Էջմիածնի Տաճարում և կարգեցաւ նոյն Կաթուղիկոսի գաւազանակիր և Նորա առանձին յանձնարարութեանց գործադիր։ 1863 ի Օգոստոսի 30 ին ըստ առաջարկութեան Կովկասեան Փոխարքայի ի յարգանս այլևայլ ծառայութեանց պարգևատրեցաւ Ռուսաց Կառավարութիւնից Ս. Վլադիմիրի 3գ. աստիճանի շքանշանով։ 1863 ի Սեպտեմբերի 23 ին Ս. Սինոդի հրամանագրութեամբ կարգուեցաւ Մայր Աթոռոյս Մատենադարանի գլխաւոր կառավարիչ։ Նոյն թուականի Նոյեմբերի 9 ին և Մատթէոս Կաթուղիկոսի կոնդակաւ նշանակուեցաւ Նոր Նախիջևանի և Բեսարաբիոյ վիճակաց հոգևոր գործոց քննիչ։ 1864 ի Դեկտեմբերի 3 ին նոյն Կաթուղիկոսի կոնդակաւ արժանացաւ Արքեպիսկոպոսութեան տիտղոսին։ 1868 ի Յուլիսի 15 ին ներկայ Վեհափառ Գէորգ Դ. Կաթուղիկոսի հրամանաւ կարգեցաւ Մայր Աթոռոյս վանքական Կառավարութեան նախագահ և նոյն թուականի Օգոստոսի 5 ին նշանակեցաւ անդամ ամենայն Հայկ. հոգևոր գպրոցաց համար կարգեալ կրթական Ժողովոյ։

1869 ի Փետրվարի 10 ին ընդունելով Ռուսաց Կառավարութեան հպատակութիւնը, նոյն ամսոյ 26 ին Ազգիս Վեհափառ Հայրապետի հրամանաւ նշանակեցաւ Շամախւոյ թեմին հոգևոր կառավարիչ։ Իսկ 1874 ի Մայիսի 25 ին կոնդակաւ նորին Վեհափառութեան կարգեցաւ Ատրպատականի վիճակի Հայոց Առաջնորդ։ 1878 ի Յուլիսի 15 ին կոնդակաւ Վեհափառ Հայրապետի նշանակեցաւ Մայր Աթոռոյս Գէորգեան ճեմարանի կառավարիչ, իսկ 1880 ի Սեպտեմբերի 23 ին կարգեցաւ Վարաբաղու վիճակի Հայոց թեմական Առաջնորդ։

Հանգուցեալ Անդրէաս Արքեպիսկոպոսի մարմինը Ազգիս Վեհափառ Հայրապետի հրամանաւ ամփոփեցաւ Շուշւոյ Վաղանջեցւոց Եկեղեցւոյ սրահում արժանաւոր հանդիսով։

Լուսաբեսցէ Տէր զհոգի հանգուցելոյն ի լոյս երեսաց Իւրոց։